ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ ՄԿՐՏԻՉ. Թրիմնան Հայրիկը, ազգի առաջին ընտրելին, հաստատուած է Կաթողիկոս ամենայն հայոց. Հաստատուած լինելը իմացուեց լունիսի 13-ին կիւրակի օր կատարուած պատարագի ժամանակ, ուր Մկրտիչ կաթողիկոսի անունը առաջին անգամ լիշուեց. Նորին Վեհափառութիւնը ս. Էջմիածին հրաւիրելու համար Երուսաղէմ ուղևորուեցին Տէր Տեղակալից նշանակուած հոգևոր պատուիրակները՝ Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան և Սարգիս եպիսկոպոս Տէր-Գալստեան, ուղեկցութեամբ Եփրեմ վարդապետի և Մեսրոբ աբեղայի. Պատուիրակները, ս. Էջմիածնից գալով, մնացին Թիֆլիսում մի քանի օր, սպասելով Բաթումից-Պոլիս գնացող շոգենաւի ուղևորելուն. Թիֆլիսից նոքա դուրս եկան լունիսի 25-ին շաբաթ օր.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԻԿԻ ՀԵՌԱԳԻՐԸ [1]). Էջմիածին Երուսաղէմից, Տեղակալ Երեմիա եպիսկոպոսին. Աստուած, որ յաջողէ զամենայն յամենայնի, նա կամեցաւ ՎԵՀ ԿԱՑՍԵՐ ձեռօք հաստատել ազգին ընտրութիւնը. Սորա համար փութացին ընդհանուր ազգայինք ամեն դասակարգէ շնորհաւորել Կայսերական վաւերացումն. Զկարենալով ամեն բուռն զգացմանց մի առ մի պատասխանել, լաւագոյն դատեցի մի հեռագրով վճարել ՄԵՐ հայրական պարտիք, յայտնելով իրՁ հոգւոյս. նախ օրհնել երկնաւոր Հայր, առ որ կաղօթէի. եղիցին կամք Քո. օրհնել ՕԳՈՍՏԱՓԱՌ ԿԱՑՍԵՐ կեանքը, որ պսակեց ժողովրդին հաւատք. օրհնել ազգ,

---

[1]) Այս հեռագիրը ստացանք ս. Էջմիածնի «Արարատ» ամսագրի խմբագրութիւնից, առանձին տպած թերթիկով.

որ հաւատարիմ ճնաց եկեղեցու աւանդութեան։ Հեռագիրս հրատարակել ուէք «Արարատ»-ի և լրագրաց միջոցաւ։

ՀԱՅՐԻԿ

«ՄՈՒՐՃ»-Ի ՑՈՒԼԻՍ ԵՒ ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻ համարները, ըստ սովորականին, լոյս կը տեսնեն միացած։ Հաւանականօրէն ամառուայ միացեալ համարները լոյս կը տեսնեն Օգոստոսի 15-20-ին։

ԱՐՍԷՆ ԴԻՄԱՔՍԵԱՆ վէպը պ. Շիրվանզադէի վերջանում է «Մուրճ»-ի ներկայ համարում և շուտով լոյս կը տեսնի նաև առանձին հատորով։

ՀԱՅՐԵՆԻՔ, Պոլսի յայտնի լրագիրը, որ հրատարակւում էր պ. Արփիար Արփիարեանի խմբագրութեամբ և պ. Յովհաննէս Շահնազարի տնօրինութեամբ, վերատին դադարեցրած է Ցաճկական կառավարութիւնից։ Հայրենիքը կառաջադիմական ուղղութեամբ համակրելի մի թերթ էր և իւր միշտ թարմ ու առողջամիտ յօդուածներով ընդունակ երիտասարդութեան ձգտող մասի համակրութիւնը վաստակելու։ Յայտնելով մեր համակրանքը դէպի Հայրենիքի ցաւմեան գործունէութիւնը, լոյս ունենք որ նորա խմբագրութիւնը չի վհատիլ դժբաղդ դէպքից ապագայի գործունէութեան համար։

ԾԱՂԻԿ շաբաթաթերթը, որ պատկանում է խաւարամիտների բանակին, «Մուրճի» դէմ պարսաւ ուղղելու դիտաւորութեամբ գրած մի յօդուածում, («Մուրճ ամսագիրը» խորագրով, տես «Ծաղիկ» 1893, № 9) հակառակ իւր բարի կամքին ստիպւած է խոստովանել, որ «Մուրճ»-ում «ընկերային նիւթերու վրայ (անշուշտ երբեմն!) կերևին ընտիր հեղինակութիւններ...»

Ցիշեալ թերթը նոյն այդ յօդուածում, ամեն երկրների խաւարամիտներին յատուկ մի եղանակով, միացած հայր և որդի Մամուրեանների հետ, Ջմիւռնիայի հայոց վարժարանները բարեշորոգող պ. Ց. Տէր-Միրաքեանի վարկը Երանով վայր գցել, որ, իբր թէ մի ինչ որ ձեռնածուի (ֆոկուսնիկ) վկայութեամբ, պ. Ց. Տէր-Միրաքեանը մի տառասխալ է արել դերմաներէնում...

ՊՈԼԻՍ, մեր թղթակից պ. Գիսակին. Ձեր նամակը ցաւօք սրտի չկարողացանք հրատարակել։ Թերևս յաջողւի մեզ տպել գալ համարում։ Շարունակեցէք սակայն։

† ԿՈՒՉԱԵՒ, Միխայիլ Նիկոլայևիչ, Անդրկովկասի գիւղացիական գործերի ատեանի նախկին պետը, վախճանւեց Ռուսաստանում։ Հան-

գոցեալը ունի մի քանի գնահատելի վաստակներ Անդրկովկասի կալուածատիրութեան մասին։

† ԳԻ ԴԸ ՄՈՊԱՍԱՆ, մէկը ֆրանսիական ամենաժողովրդական վիպասաններից, հեղինակը բազմաթիւ վէպերի, վախճանուեց լունիսին, խելագարութեան դրութեան մէջ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ։ Ներկայ 1893 թուականի ամառուայ ամիսներում բացուելու է Թիֆլիսում Հայոց Բարեգործական Ընկերութեան մատենադարանը։ Մատենադարան հիմնելը միշտ ընկերութիւնը վճռել էր դեռ ևս երեք տարի առաջ, որոշելով բացումը ետաձգել մինչև որ ամէն տարի 800 ռուբլի վերապահելով՝ երեք տարուայ ընթացքում կը գոյանայ 2400 ռուբլու գումարը, որով և պէտք է սկսէր գրադարանի հիմնարկութիւնը։ Կառավարութիւնից թոյլտուութիւնը ստացուեց 1892 թուականին, իսկ այժմ ահա շուտով պէտք է բացի գրադարանը։ Գրադարանը ունենալու է երկու մաս, որոնցից մէկը լինելու է հիմնական գրադարան, իսկ միւսը լինելու է փոխառու գրադարան։ Հիմնականի համար ձեռք են բերուելու բոլոր հայերէն գրքերը, անխտիր, ապա առհասարակ արևելագիտութեան վերաբերեալ գրքերը օտար լեզուներով։ Հիմնական գրադարանից օգտուել կարելի կը լինի գրադարանի մէջ և, բացի որոշ դէպքերից, ոչ մի գիրք չպիտի դուրս տրուի։ Փոխառու գրադարանը կազմելու է հանրակրթական գրքերից հայերէն և օտար լեզուներով։ Պարբերական հրատարակութիւնները լինելու են թէ հիմնականում և թէ փոխառու մասում։

Հիմնականում, բացի գրքերից, կընդունուին նաև հին ձեռագրեր, ալբոմներ, դրամներ, արձանագրութիւններ և այլն։

Բարեգործական Ընկերութիւնը ներկայ լունիսին կայացրած նիստում ընտրեց եօթ հոգուց բաղկացած մի յանձնաժողով։ Գրադարանի կանոնադրութիւնը մշակելու համար։ Յանձնաժողովի մշակած ծրագիրը կ՝ենթարկուի ընդհանուր ժողովի քննութեան և քէֆարկութեան։ Բայց Գրադարանի պաշտօնական բացումը այնուամենայնիւ կը կատարուի կանոնադրութիւնը հաստատելուց առաջ։

Վերը գծագրածի համեմատ մի գրադարանի հիմնելը Թիֆլիսում հայոց Բարեգ. Ընկերութեան նշանաւոր գործերից մէկն է, և որպէս այդպիսին՝ շնորհաւորում ենք Ընկերութիւնը այդ օգտակար գործի համար։

ՎՐԻՊԱԿ. Սոյն համարում (№ 6) զետեղուած պ. Լ. Մանուէլեանի ուսանողների վերնագրի տեղ պէտք է լինի երեք աստղանշան (***).

ՆՈՐ ՍՏԱՑԱԾ ԳՐՔԵՐ

1) „МОИСЕЙ ХОРЕНСКІЙ, въ новомъ переводѣ Н. О. ЭМИНА, съ примѣчаніями и приложеніями—Исторія Арменіи—Изданіе Лазаревск. Инст. Вост. Языковъ—„Этнографическій фондъ Н. О. Эмина", выпускъ I. (Посмертное изданіе).—Москва, тип. В. А. Гатцукъ, 1893, գինն է 2 ռ., ուղարկելով 2 ռ. 25 կոպէկ.

2) ԷՐԵՐՍ, Գէորգ, փոխադրութեամբ Օ. Շապիրի և թարգմ. Գրիգոր ՇԱՀ-ԲՈՒԴԱՂԵԱՆԻ.—Փարաւոնի աղջիկը, պատմական վէպ. Թիֆլիսի Հ. Հ. Ընկ. հրատարակութիւն. Թիֆլիս, տպ. Շարաձէ, 1893, գինն է 80 կոպէկ.

3) ԼՈՒՆԿԵՒԻՉ, Վ.—Հանրամատչելի բնախօսութիւն (13 նկարներով), ձեռագրից թարգմ. Կ. Գիւլնազարեան. Հրատարակեց Թիֆլիսի Հայ. Հր. Ընկ. Թիֆլիս, տպ. Ռոտինեանցի, 1893, գինն է 1 ռ.

4) CARRIÈRE A.— Novelles sources de Moïse de Khoren: Etudes critiques. Vienne, Imprimerie des Mechitharistes, 1893, գինն է աւստրիական ֆլորին 2,50.

5) ՄԱՐԿ ՏԻԷՆ (Սամուէլ Կլեմէնս).—Իշխանն ու աղքատը (պատմական վէպ), թարգմ. Գրիգոր Շահբուդաղեան. Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանի. 1893, գինն է 1 ռուբլի.

6) ՏԷՐ-ՄԻՐԵԼԵԱՆ, Արշակ, Դ-ր.—Հայաստանեայց եկեղեցին և Բիւզանդեան ժողովոյ պարագաները. պատմական քառաջադրութիւն (?) Մոսկուա, տպ. Մ. Բարխուդարեանցի, 1892, գինն է 1 ռ. 50 կոպէկ. (Արժանացած Իզմիրեանի Սահակ-Մեսրոբեան մրցանակի).

7) ՄՈՉԽՈՒԲԱՐԻՉԷ, Ա. Էլգուջա, վէպ.—վրացերէնից թարգմ. Տ. Փիրումեանց. Թիֆ. Հայ. Հր. Ընկ. հրատարակութիւն. Թիֆլիս, տպ. Վրաց. Հրատ. Ընկ. 1893, գինն է 45 կոպէկ.

8) ԲԱՄԱԼԵԱՆՑ, Ս.—Խարազի տղայ կամ երկու ախպերացեղ (հէքեաթ). Հրատարակութիւն Թիֆլ. Հայ. Հրատ. Ընկ.—Թիֆլիս, 1893, տպ. Շարաձէի, գինն է 40 կոպէկ.

Խմբագիր՝ ԱՒԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ
Հրատարակիչ՝ ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱԶԱՐԵԱՆՑ